



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

26 հոկտեմբերի 2021 թվական

7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ
ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ժամը 18.40

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է
ավագանու 10 անդամ՝

Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արման Բաբաջանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սիփան Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Իզաբելլա Աբգարյան՝ Երևանի ավագանու անդամ,

Էռնեստ Ավանեսով՝ Երևանի ավագանու անդամ:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

- Շնորհակալություն: Հարգելի՛ գործընկերներ, հարցս վերաբերում է հետևյալին՝ առաջիկայում լինելու են ձյան տեղումներ, ցանկանում եմ տեղեկանալ ինչքանո՞վ ենք մենք այս պահին նախապատրաստվում ձյան տեղումներին, արդյոք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի որոշ աշխատակիցներ այս շրջանում վերապրոֆիլավորվում են՝ ձյան մաքրման աշխատանքներին ներգրավվելու համար: Արդյոք իրականացվում են մի շարք աշխատանքներ ոստիկանության հետ, որովհետև ճանապարհների մաքրության մի շարք խնդիրներ են եղել նախկինում: Ինչպես նաև խնդրում եմ ներկայացնել տեղեկատվություն ձեռք բերված տեխնիկայի վերաբերյալ:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

- Ձմռան նախապատրաստական աշխատանքների մեկնարկը տրված է: Արդեն բավարար քանակի աղի և ավազի խառնուրդի կուտակումն ապահովված է երկու խոշոր հասցեներում՝ Շիրակի և Թևոսյան փողոցների համապատասխան տարածքներում և բավարար են համապատասխան բաշխումն ապահովելու համար: Միևնույն ժամանակ աղ ու ավազ կտրվի նաև համատիրություններին՝ բակային տարածքներում, շենքերի շքամուտքերի մոտ այդ աշխատանքները կատարելու համար: Մեքենա-մեխանիզմների վերապրոֆիլավորումն սկսվել է երեկվանից, 3-4 օրում կավարտվեն, բոլոր կոմբինացված մեքենաները կկահավորվեն ձմռան սեզոնին համապատասխան: Միևնույն ժամանակ ձեռք են բերվել անհրաժեշտ պարագաները՝ կապված անձնակազմի հագուստի հետ:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը կմասնակցի ձմռան աշխատանքներին՝ ըստ անհրաժեշտության: Եթե աշխատանքների ծավալը մեծ լինի, ապա համաձայն պայմանավորվածության կմոբիլիզացվի նաև ՀՈԱԿ-ի աշխատուժը:

Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում նույնպես այդ հանձնարարականը տրված է: Ունենք ներկրվող ավտոմեքենաների նոր թվաքանակ: Ներկրվելու է խոշոր մասնագիտացված, կոմբինացված նոր մոդելի 8 մեքենա, որոնք

մայրաքաղաքում կլինեն ս.թ. նոյեմբեր ամսվա վերջին: Ձմռան աշխատանքներին հարմարեցված տրակտորները և փոքր մեքենաները, մեքենա-մեխանիզմների անվանդոդերը և անհրաժեշտ պահեստամասերը, քայուղերը ևս ապահովված են:

Ինչ վերաբերում է մյուս աշխատանքներին, վարչական շրջանների ղեկավարներն արդեն տվել են հանձնարարական՝ բազմաբնակարան շենքերում ձմռան նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար: Խոսքը վերաբերում է որոշ բաց կանգնակների, շքամուտքերի ջերմամեկուսացման և այլ հարակից աշխատանքներին: Մատակարար կազմակերպությունների՝ «Վեոլիա ջուր», «Հայաստանի էլ. ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ընկերությունների հետ արդեն առկա է պայմանավորվածություն, իրենք արդեն սկսել են ձմռան նախապատրաստական աշխատանքները: Երեք ընկերություններն էլ հայտնել են, որ պատրաստ են ձմռանն օպերատիվ ծառայություն մատուցել: Մեզ մոտ էստենսիվ շրջանը համարվում է նոյեմբերից-հունվար ամիսները, ինտենսիվ շրջանը՝ դեկտեմբերից-փետրվարի վերջ: Կախված եղանակային պայմաններից, այդ ժամանակահատվածը մենք կընտրենք, բայց մենք խնդիր ենք դրել մեր առջև նոյեմբեր ամսվա վերջին 100 տոկոս պատրաստ լինել ձմռան աշխատանքներին:

Պավել Սարգսյան

- Հաջորդ հարցս վերաբերում է պոլիկլինիկաներին, մասնավորապես՝ պատվաստման գործընթացին: Ես գիտեմ, որ քաղաքները երբ գնում են պոլիկլինիկա՝ պատվաստվելու, երեք տեղ հերթ են կանգնում: Առաջինում՝ փաստաթղթերն են վերցնում, երկրորդում՝ ստուգումներ անցնում, երրորդում՝ պատվաստվում: Ուզում եմ հասկանալ, արդյոք հնարավոր չէ այս հերթերը կրճատել, որպեսզի մարդիկ կարողանան ավելի դյուրին և արագ ստանալ պատվաստումը: Ինչպես նաև ցանկանում եմ տեղեկանալ՝ մենք ունե՞նք տեղեկատվություն թե քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի քանի՞ տոկոսն է պատվաստված:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

- Քաղաքապետարանն ունի 30 բուժհաստատություն և բնական է, որ յուրաքանչյուր բուժհաստատություն շենքային պայմաններից ելնելով, տարբեր կերպ է կազմակերպվում պատվաստման գործընթացը: Յուրաքանչյուր օր քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությունն անակնկալ այցեր է կատարում 3-4 պոլիկլինիկա: Այո՛, եղել է այդպիսի դեպք մի պոլիկլինիկայում, երբ երեք տեղ հերթեր են գոյացել, սակայն դա շտկվել է: Անձամբ եղել եմ մի քանի պոլիկլինիկաներում, այդպիսի դեպքեր չեն եղել, սակայն կա մարդկանց բավականին մեծ հոսք, պատվաստվողների թիվը մեծացել է և բնական է, որ պետք է լինեն հերթեր: Պետք է հաշվի առնենք նաև, որ պոլիկլինիկաները միայն COVID-19 համավարակի դեմ պատվաստումով չեն զբաղվում: Այլ ծառայությունների համար են նաև հերթեր գոյանում, քանի որ սուր շնչառական հիվանդություններն էլ են այժմ սրված: Ուզում եմ նաև տեղեկացնել, որ ստացել ենք սեզոնային գրիպի դեմ շատ բարձր որակի պատվաստանյութ, որն անվճար է և հասանելի բոլոր պոլիկլինիկաներում: Հորդորում եմ, որպեսզի մեր քաղաքացիները գրիպի դեմ պատվաստանյութով ևս պատվաստվեն: Նաև դրանով է պայմանավորված պոլիկլինիկաներում մարդկանց կուտակումները: Միայն այսօր Երևան քաղաքի պոլիկլինիկաներում պատվաստվել է մոտ 9000 հոգի: Առավելագույնն անում ենք, որպեսզի հեշտացնենք գործընթացը և վիճակը կառավարելի լինի:

Ինչ վերաբերում է աշխատակիցների պատվաստումներին, ապա ես կարող եմ առողջապահական հիմնարկների մասով տեղեկացնել, որ քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հաստատությունների աշխատակիցների մոտ 80 տոկոսը պատվաստված է:

Հայկ Մարության

- Օգտվելով առիթից ուզում եմ ասել, որ ողջ հանրապետության մասշտաբով պատվաստումների մեր ցուցանիշներով առաջատար ենք:

Քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների պատվաստումների վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Դավիթ Համբարյանը:

Դավիթ Համբարյան

- Պարոն Սարգսյան, ս.թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ քաղաքապետարանի աշխատակազմի 680 փաստացի աշխատողների 44 տոկոսը պատվաստված է, վստահ եմ որ այսօրվա դրությամբ այդ թիվը բավականին մեծ կլինի:

Պավել Սարգսյան

- Շնորհակալություն:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան:

Մարկոս Հարությունյան

- Հարցս վերաբերում է ինքնական շինություններին: Ինչի՞ համար ենք քանդում ինքնական շինությունները, եթե մենք ընդունել ենք Երևանի ավագանու որոշում՝ ըստ որի, այդ շինությունները կարող են դառնալ համայնքի սեփականությունը: Քանդում են այս կամ այն ինքնական շինությունը, բայց միաժամանակ տեսնում ենք, որ հարակից տարածքում գտնվող ինքնական շինություն կառուցողն ավելի հմուտ է գտնվել և դիմել է դատարան: Արդյոք ճիշտ ենք վարվում: Միգուցե հնարավորություն տրվի նա էլ դատարանում վիճարկի, թե արդյոք իր ինքնական շինությունը ենթակա է քանդման, թե ոչ: Ես ծանոթ եմ, որ քրեական գործեր են հարուցվել ինքնական շինությունների վերաբերյալ, որն իմ համար զավեշտալի է, քանի որ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ.912-Ն որոշման համաձայն՝ քաղաքացիներին թույլատրվում է օրինականացնել ինքնական շինությունները:

2019թ. սկսած յուրաքանչյուր նիստի ժամանակ ես այս մասին խոսել եմ, որովհետև պարզ հասկանում եմ, թե ինչ է կատարվելու քաղաքում, եթե մենք կտրուկ գործողություն չկատարենք: Այդ կտրուկ գործողությունը՝ բացառելն է ինքնական շինության օրինականացումը: Այսինքն հ.912-Ն որոշումը պետք է չեղարկվի կամ նոր որոշում ընդունվի, որով կքրեականացվի ինքնական շինությունների կառուցումը:

Խնդրում եմ պատասխանել այս հարցին:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

Դավիթ Ճգնավորյան

- Քաղաքաշինական մասով տեղեկացնեմ, որ մենք պետք է գանք այն հստակ գիտակցման, որ ինքնակամ շինությունը չարիք է և որևէ օրենք դրա ձևակերպումը տալ չի կարող: Կան իրավական ակտեր, այդ թվում նաև, այո՛, ՀՀ կառավարության 18.05.2006թ. հ.912-Ն որոշումը, որի 4-րդ կետով թույլատրվում է ինքնակամ շինությունների օրինականացումը: Երկար ժամանակ այդ որոշումը մեր կողմից դիտարկվել է որպես համայնքի շահերին հակասող, որի շուրջ բազմաթիվ քննարկումներ են եղել ՀՀ կառավարության գործընկերների հետ: Արդյունքում՝ եկել ենք այն եզրակացության, որ համայնքը պետք է հնարավորություն ունենա իր տարածքը պահպանելու, պաշտպանելու և միայն հանրային շահին ծառայեցնելու, ոչ թե միայն մեկ անձի համար ծառայեցնել: Մենք չենք ուզում, որ այն ինչ նախկինում կառուցվել էր ապօրինի՝ առանց որևէ հիմնավորման ու քաղաքաշինական վերլուծության՝ շարունակական լինի: Հետագայում պետք է բացառել ինքնակամ շինությունների կառուցումը, այս ամենը պետք է հանել նաև քաղաքացիների գիտակցությունից:

Հայկ Մարության

- Իրավական մասով հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Հայկ Պողոսյանը:

Հայկ Պողոսյան

- Իրավական առումով պատճառները բազմաթիվ են: Յուրաքանչյուր որոշում իր մեջ ներառում է քանդման պատճառների հիմնավորումը: Բազմաթիվ են դեպքերը, չեմ կարող թվարկել՝ սկսած կյանքին և առողջությանը սպառնացող վտանգից: Յուրաքանչյուր որոշում պետք է նայել առանձին:

Ինչ վերաբերում է նրան, որ մի ինքնակամ կառույցը քանդվում է, իսկ մյուսը՝ ոչ, ապա առաջինը որպես կանոն՝ ուրիշի սխալը քո սխալը ճիշտ չի դարձնում, երկրորդ՝ ինձ հայտնի չի դեպք, որ կոնկրետ կառույց եղել է քանդման ենթակա և քաղաքապետարանը չի քանդել: Քաղաքապետարանի ռեսուրսը սահմանափակ է և քանդումները կատարվում

են ըստ հերթականության: Այսինքն՝ եթե որևէ ինքնակամ կառույց դեռ չի քանդվել, դա չի նշանակում, որ չի քանդվելու: Քանդման աշխատանքները կարող են լինել ցանկացած պահի: Բազմաթիվ դեպքեր կան, երբ դատարան են դիմում: Դատարանի որոշումները պարտադիր են կատարման բոլորի համար, այդ թվում՝ նաև մեր համար և մենք միանշանակ առաջնորդվում ենք օրենքի պահանջով: Հարցի կարգավորումից հետո և դատարանի՝ այդ շինությունը քանդելու, կամ քանդման ենթակա չլինելու վերաբերյալ որոշում ընդունելուց հետո աշխատանքները կիրականացվեն՝ ըստ դատական ակտի: Շինությունը քանդման ենթակա լինելու դեպքում գործընթացը կշարունակվի:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Ես կուզենայի նշել, որ բոլոր այն դատական գործերը, որոնցով որ հայցի ապահովման միջոցներ է կիրառված ու արգելք կա կառույցը քանդելու, իրավաբանական վարչության կողմից արդեն ներկայացվել են համապատասխան միջնորդություններ՝ դրանք վերացնելու համար, որպեսզի քանդման գործընթացը շարունակվի: Նույնիսկ ունենք դեպքեր, երբ արդեն հայցի ապահովման միջոցը վերացվել է, համապատասխան ստորաբաժանումներին իրազեկել ենք և քանդման աշխատանքները կամ կազմակերպվել են կամ ընթացքում են:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի ավագանու որոշմանը, ապա այդ որոշումն այն մասին էր, որ ինքնակամ կառույցը օրինական ճանաչվելուց հետո համայնքն այլևս չուներ պարտականություն այդ կառույցն օտարելու կառույցն իրականացնող անձին: Սակայն այն բոլոր ինքնակամ կառույցները, որոնք ենթակա չեն օրինականացման /յուրաքանչյուր դեպքում հիմքը տարբեր է/, այդ կառույցներն անկախ ավագանու որոշումից ենթակա են քանդման, քանի որ քաղաքացիական օրենսգիրքն արգելում է դրանց օրինականացումը, նույնիսկ համայնքի անվամբ:

Հայկ Մարության

-Ամփոփելով պատասխանը, ասեմ, որ այստեղ կարևորը սկզբունքն է: Մեր սկզբունքներն են. առաջինը՝ օրենքը, երկրորդը՝ համայնքի շահը, երրորդը՝ համաչափություն, հավասարություն՝ առանց բացառության: Իմ պաշտոնավարման առաջին օրից միջև օրս չի եղել և չի կարող լինել բացառություն ոչ ոքի համար: Բոլորին ցուցաբերվում է նույն վերաբերմունքը, անկախ նրանից, թե ես ինչ հարաբերությունների մեջ եմ տվյալ անձի հետ: Դա իմ համար անընդունելի է: Բոլորը հավասար են օրենքի առաջ:

Մարկոս Հարությունյան

- Երկրորդ հարցը հնչեցնեմ. ինքնական կառույցների օրինականացումից որքա՞ն գումար ենք նախատեսել, որ այս տարի պետք է լինի և որքա՞ն գումար է գանձվել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի Ժ/պ Վահե Բալասյանը:

Վահե Բալասյան

- 2021 թվականի հոկտեմբերի 22-ի տվյալներով քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն արդեն հավաքագրել է 1 մլրդ 994 մլն դրամ գումար, նախատեսված 850 մլն դրամի փոխարեն: 2020թ. համեմատ այդ թիվն աճել է: 2020թ. տարեվերջին այդ թիվը կազմել է 1 մլրդ 289մլն դրամ:

Մարկոս Հարությունյան

-Ողջունում եմ այս հարցով զբաղվող ողջ անձնակազմին և շնորհակալություն հայտնում՝ սրտացավ աշխատանքի համար: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Ես ևս շնորհակալություն եմ հայտնում ողջ անձնակազմին, ինչպես նաև ոստիկանությանը համագործակցության համար:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱԼԸ խմբակցություն անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Պարոն քաղաքապետ, իմ հարցը վերաբերում է կառուցապատումների ծավալին: Հատկապես, Արաբկիր վարչական շրջանի Ադոնց-Գրիբոյեդով փողոցների հարակից տարածքում ձևավորված հսկայական թաղամասին, որտեղ մեծ թվով նոր բնակիչներ պետք է բնակվեն: Օրինակ, երբ կառուցվում էր Նորքի զանգվածը, այդ տարածքի համար նախատեսվում էր ունենալ դպրոց, մանկապարտեզ, պոլիկլինիկա, հիվանդանոց: Ինձ հետաքրքիր է, արդյոք նշված հատվածի համար քաղաքի զարգացման ծրագրերում կա բնակչությանն սպասարկող ենթակառուցվածքների ստեղծելու նախագծեր:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

Դավիթ Ճգնավորյան

-Կփորձեմ հակիրճ պատասխանել: Համայնքն իր բոլոր գործիքակազմերով փորձում է ներազդել, բանակցել, պահանջել, նպաստել, որ շենքերի բնակելի զանգվածների աճի հետ մեկտեղ հնարավոր լինի այդ մեծ թաղամասերի ընդհանուր տարածքում ապահովել հավասարաչափ ենթակառուցվածքների բաշխում: Այդ գործընթացը տարածական պլանավորման կարևորագույն բաղադրիչներից է:

Չեմ թաքցնում, որ կան որոշակի խնդիրներ, որովհետև որոշակի նորմատիվներ Սովետական միության ստանդարտներով են և միգուցե իդեալիստական ցուցանիշներ ունեն, բայց իրականանալի չեն: Մենք փորձում ենք այդ ամենը մոտեցնել իրականությանը: Բոլոր դեպքերում մեզ համար այդ հարցերն առաջնային են՝ թե՛ մանկապարտեզների, թե՛ դպրոցների, թե՛ այլ ենթակառուցվածքային միավորների ստեղծման առումով:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն, այստեղ նաև կարող է առաջանալ երթևեկության խնդիր՝ մի թաղամասից մյուս թաղամաս երեխաներին դպրոց կամ մանկապարտեզ տանելու համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ ես հարցս հանում եմ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն:

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Որպես Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողովի անդամ միշտ փորձել եմ հետամուտ լինել մեր համայնքային միջոցների արդյունավետ օգտագործմանը: Բազմիցս բարձրաձայնել եմ, որ համայնքային միջոցների վատնումներ են լինում, այսինքն՝ ծախսն անարդյունավետ է:

Իմ հերթական գրությանն ի պատասխան ստացել եմ մի անհասկանալի տարօրինակ պատասխան, որն առիթ հանդիսացավ այս հարցը ստիպված բարձրաձայնել: Մենք գիտենք, որ բազմաթիվ խնդիրներով լի ստորաբաժանում ունենք քաղաքապետարանում, դա սպորտի և երիտասարդության հարցերի բաժինն է: Քանի որ իմ բարձրաձայնած խնդիրները դեռ լուծում չեն ստացել, ստիպված եմ լինում բարձրաձայնել այնքան, մինչև որ այդ խնդիրներն իրենց տրամաբանական լուծումները կստանան և մենք կփորձենք թևակոխել բարեփոխման փուլ:

Ես գրությամբ խնդրել էի ներկայացնել վերջին հինգ տարվա օրացուցային պլանը և դրան համապատասխան կնքված բոլոր մրցութային պայմանագրերը՝ հասկանալու համար, թե ի՞նչ միջոցառումներ են կազմակերպվել վերջին հինգ տարվա ընթացքում և ովքե՞ր են եղել մրցութի մասնակիցները և հաղթողները:

Ուզում եմ առանձնացնել երկու կարևորագույն կետ: Իմ ուսումնասիրության արդյունքում պարզվեց հետևյալը. առաջինը՝ 2017-2020թթ. Երևանի քաղաքապետն առհասարակ չի հաստատել օրացուցային պլանը և այդ տարիներին, չհաստատված

օրացուցային պլանով տեղի են ունեցել համապատասխան մրցույթներ: Երկրորդը՝ պայմանագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ չնայած նրան, որ հաղթող կազմակերպությունները գրեթե միշտ կրկնվում են, որը միգուցե նորմալ է, բայց նորմալ չէ, որ հաղթող կազմակերպությունները տարբեր տարիներին տարբեր քանակի են: Այսինքն, դիցուք, եթե մենք ունենք օրինակ՝ 60 միջոցառում, մի տարի այդ միջոցառումները բաժանվել են 2 լոտի: Մի լոտով կազմակերպվել է մրցույթ 45 միջոցառման համար, մյուս լոտով՝ 15: Սա հերթական լրջագույն խնդիրն է, թե ինչպես կարելի է տարբեր բնույթի միջոցառումներ կազմակերպելու համար մեկ լոտով հավաքել մի ամբողջ տարվա ծրագիր:

Այս ամենի վերաբերյալ ներկայացրել եմ գրություն՝ խնդրելով քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության և ներքին աուդիտի բաժնի ուշադրությունը հրավիրել նշված խնդիրներին:

Ես միշտ բարձրաձայնել եմ, որ Երևանի քաղաքապետարանի արդյունավետությունն ապահովող ամենակարևոր ստորաբաժանումներից մեկը դա վերահսկողության վարչությունն է, որը պետք է ճիշտ կարողանա վերահսկել համայնքային միջոցները: Իմ ներկայացրած խնդիրների վերաբերյալ վերահսկողության վարչության կողմից տրված պատասխանը որևէ կապ չունի բարձրացված հարցերի հետ:

Ես այսօր բարձրաձայնեցի թե ներքին աուդիտն ինչ ընթացքով է իրականացվում, եթե որևէ պահի դրությամբ արձանագրվում է կոպտագույն խնդիր և անհրաժեշտություն է առաջանում աուդիտ կազմակերպել: Հետագայում պարզվեց, որ եթե տարվա ներքին աուդիտի օրացուցային պլանը սպառված չէ, ապա իրավունք չկա աուդիտ կազմակերպել, որն իմ համար ընդունելի չէ:

Հարցս հետևյալն է՝ ինչպե՞ս կմեկնաբանի Երևանի քաղաքապետարանը բարձրացված այս երկու խնդիրները և արդյոք այս երկու խնդիրներն իրենց տրամաբանական լուծումները կստանան:

Հայկ Մարության

-Հարցին կապատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

Սերգեյ Ներսեսյան

-Աուդիտի մասով տեղեկացնեմ, որ «Ներքին աուդիտի մասին» օրենքին համապատասխան սահմանվում է տարեկան պլան, թե որ կազմակերպություններն են տարվա ընթացքում ստուգում անցնելու: Օրենքի պահանջներին համապատասխան մենք իրավունք ունենք շեղում անել ընդամենը 20 տոկոսի չափով: Մինչ Ձեր գրությունը ներկայացնելը, պարոն Անտոնյան, այդ շեղումն արդեն եղել է, որովհետև մենք ունեցել ենք հրատապ խնդիրներ և պետք էր ստուգումներ իրականացնել: Ուստի՝ պլանում կատարել ենք փոփոխություն և իրականացրել ստուգում տվյալ կազմակերպություններում: Ինչ վերաբերում է Ձեր նշած օրացուցային պլանին, ինձ համար տարօրինակն այն է, որ 2021թ. կա հաստատված այդպիսի պլան, սակայն ես չեմ տիրապետում այդ տեղեկատվությանը: Կխնդրեմ պարզաբանեք, թե դա ո՞վ պետք է կազմեր և ի՞նչ միջոցառումների մասին է խոսքը:

Արման Անտոնյան

-Եթե մենք ներքին աուդիտի միջոցով չունենք այս խնդիրը վեր հանելու և պարզելու հնարավորություն, ապա կարող ենք այլ մեթոդներ գտնել և արտաքին աուդիտ հրավիրել, որովհետև խնդիրն իրականում կրկնվում է, անհրաժեշտ է անհապաղ լուծում գտնել և համապատասխան պատասխանատուներին հայտնաբերել:

Ինչ վերաբերում է օրացուցային պլանին՝ նախքան միջոցառումների իրականացումը, քաղաքապետը հաստատում է այդ պլանը: Եթե քաղաքապետը չի հաստատում այդ օրացուցային պլանը, նշանակում է դա իրականացնելու իրավունք չկա: Այսինքն տարիներ շարունակ կազմակերպվել են մրցույթներ, որոնք քաղաքապետի կողմից չեն հաստատվել: Նշանակում է տվյալ ստորաբաժանումը կատարել է իր պարտականություններից վեր, կամայական աշխատանք:

Հայկ Մարության

-Հարցի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

Գայանե Մելքոն Մելքոնյան

-Օրացուցային պլանի մասին տարընկալումներ կան, որպեսզի պարզ լինի, ասեմ, որ դա ոչ թե գնումների գործընթացքով կազմակերպվող մրցույթների մասին է խոսքը, այլ սպորտային միջոցառումների պլանի, որը սպորտի և երիտասարդության հարցերի բաժինն, իր կանոնադրության համաձայն, կազմում է, սակայն ես որևէ տեղ չեմ տեսել, որ այդ պլանը պետք է հաստատի քաղաքապետը: Այս մասով ես խնդրում եմ թույլ տալ կատարել ուսումնասիրություն՝ հասկանալու համար խախտում եղել է, թե ոչ և եթե եղել է, ապա ընթացք տանք՝ գտնելու պատճառները:

Հայկ Մարության

- Պարոն Ներսեսյան, խնդրում եմ Դուք էլ ուսումնասիրեք բարձրացված խնդիրը:

Սերգեյ Ներսեսյան

- Շատ լավ, պարոն քաղաքապետ, կկատարենք ուսումնասիրություն և կներկայացնենք տեղեկատվություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱԼԸ խմբակցություն անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

- Առաջին հարցը վերաբերում է Երևան քաղաքի կանաչապատմանը: Խորհրդային տարիներին մեր քաղաքը բավականին կանաչապատված էր, սակայն ցավոք մուֆ ու ցուրտ տարիներին մեր համաքաղաքացիները մեծ թվով ծառահատումներ արեցին՝ առանց հետևանքների մասին մտածելու: Մենք ունենք «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ, որտեղ արդեն երրորդ տնօրենն է նշանակվում, բայց աշխատանքները բարվոք համարել չի կարելի: Եթե չեմ սխալվում 2020 թվականի թյուջեով հաստատվեց քաղաքի կանաչապատման համեմատաբար երեք խոշոր ծրագրեր: Ես ուզում եմ իմանալ, ըստ տարածքների ի՞նչ փուլում են այդ կանաչապատման ծրագրերը: Դրանցից մեկը «Հաղթանակ» զբոսայգու տարածքն է, որտեղ պետք է կանաչապատման աշխատանքներ իրականացվեր: Ես անընդհատ անցնում եմ այդ հատվածով և նկատել եմ, որ միայն կառուցվել են ոռոգման համակարգերը, այլ փոփոխություններ չկան:

Հարցս հետևյալն է՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն»

ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված 3 նախագիծը, որով 7 հեկտար կանաչապատում պետք է իրականացվեր, ի՞նչ փուլում են գտնվում:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

Գայանե Մելքոն Մելքոնյան

- Ես վստահ չեմ որ տարածքներն ի նկատի ունեք: Կոնկրետ, Սարալանջում որոշակի աշխատանքեր կատարվել են, որոշ պատճառներով ոչ ամբողջ ծավալով, բայց առաջիկա շաբաթներին այնտեղ երկրորդ փուլով կրկին կանաչապատման աշխատանքներ ենք նախատեսում: Մնացած տարածքները չեմ մտաբերում որոնք են, եթե հստակեցնեք կպատասխանեմ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը ԻՄ ՔԱԼԸ խմբակցություն անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

- Ավագանու նիստի ընթացքում, այս մասին անդրադարձ եղավ, խոսքս վերաբերում է հատկապես «Վեոլիա ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերություններին, որոնց բացթողումներն անընդհատ վերագրվում են քաղաքապետարանին: Այս երեք ընկերությունները Երևան քաղաքում ունեն ամենատարբեր բացթողումները՝ քաղաքում կատարում են քանդման աշխատանքներ, ճեն վերակազմում, կամ էլ շատ վատ որակով են վերականգնում, օրինակները բազմաթիվ են: Ունեն թերացումներ նաև իրենց մյուս գործառույթներում, օրինակ՝ ցանկացած բազմաբնակարան շենքում բաց վիճակում գտնվող հոսանքալարերը ՀԷՑ-ի ակնհայտ վատ աշխատանքի հետևանքն է: «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը սպասարկման գումար է գանձում, բայց և՛ բնակիչները և՛ մենք համապատասխան սպասարկում չենք ստանում, կան հին, չներկված խողովակներ, որոնք պարտադիր պետք է ներկել: Վերջերս մեր բակ էին եկել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության աշխատակիցները, գազատար խողովակները ներկելու նպատակով, բայց ընդամենը խողովակների վրայից ներկեցին, գնացին: Նշեմ նաև, որ քաղաքի որևէ հատվածում դիտահորի բացակայության դեպքում «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունը դիտահոր տեղադրում է քաղաքացու, Երևան քաղաքի

ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի համագործակցության արդյունքում:

Հարցս հետևյալն է՝ երբևիցե ունեցել եք նման փորձ, եթե ոչ, ապա առաջարկում եմ, այս երեք ընկերությունների բացթողումները հավաքագրել և ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, քանի որ այդ մարմինն է այդ երեք ընկերությունների հետ աշխատում և վերահսկողություն սահմանում: Նշեմ որ այդ ընկերությունների բացթողումները վերագրում են Երևանի քաղաքապետարանին, իսկ մենք գիտենք, որ դա այդպես չէ:

Հայկ Մարության

- Պարոն Արեյան, խնդրում եմ պատասխանեք թե ինչպե՞ս ենք աշխատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ և պարզաբանեք մեր գործելաճը գործընկերների հետ: Օրինակ՝ խախտումների ժամանակ ինչպե՞ս ենք աշխատում, ի՞նչ պատժամիջոցներ ենք կիրառում:

Կամո Արեյան

- Տեղեկացնեմ, որ մատակարար կազմակերպությունների կողմից Երևան քաղաքի տարածքում նոր ցանցի, միացումների անցկացման, բարելավումների, ներդրումային ծրագրերի իրականացման ժամանակ քանդման, տեղադրման, մոնտաժման վերականգման աշխատանքների վերաբերյալ հարցը լավագույն ձևով է կարգավորված: Կնքված է քաղաքացիաիրավական պայմանագիր, բոլոր չորս կազմակերպությունների հետ, որտեղ մանրամասն տրված են տեխնիկական առաջադրանքով պահանջվող բոլոր պայմանները, ինչպես նաև վերահսկողությունն ու վարչական պատասխանատվությունը: Կատարման նկատմամբ հսկողությունը դրված է վարչական շրջանների ղեկավարների վրա, որոնք անմիջապես կնքում են պայմանագիր մատակարար կազմակերպության հետ: Ընդհուպ, ներառված է, որ համայնքին պատճառված վնասի փոխհատուցումն իրականացվում է դատական կարգով: Ամեն ինչ իդեալական չէ քաղաքում, բայց ասել, որ քաղաքապետարանի կողմից քայլ արված չէ, դա առավել քան ճիշտ չէ: Ձեր մտահոգության հետ համաձայն եմ, բայց չեմ համաձայնվի որոշ գնահատականների հետ: Բոլոր կազմակերպությունները ենթարկվում են այդ պայմանագրին: Երևանի

քաղաքապետարանի կողմից մշակված պայմանագիրը ճանաչվել է լավագույնը, տեղայնացվել է հանրապետության բոլոր քաղաքներում և համայքներում: Այժմ մոտ հինգ հարյուր համայնք աշխատում է մեր պայմանագրի օրինակով: Ինչ մնում է աշխատանքների կատարման որակին, կարող եմ ասել, որ լավ առաջընթաց կա, բայց, նրանց կապալառուները ցուցաբերում են որակի նկատմամբ անվերահսկելի վարքագիծ կամ վատ որակ: Վերջին շրջանում անցկացվել է շրջայց, գույքագրվել են բոլոր թույլտվությունները: «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունն իրականացրել է բավականին որակով աշխատանք՝ կատարելով տեխնիկական բոլոր պայմանների պահանջները: Դրա մասին կարող են վկայել Աջափնյակ, Նոր Նորք և Կենտրոն վարչական շրջանների ղեկավարները: Ինչ վերաբերում է «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը, ապա ընկերությունն ունեցել է կարևոր թերություններ, գույքագրվել են բոլոր բաց թողնված տարածքները, որտեղ և՛ ժամկետի, և՛ որակի խախտում կար: Այդ մասին զեկուցվել է Երևանի քաղաքապետին և կասեցվել են «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը տրվող բոլոր թույլտվությունները: Անցյալ շաբաթվա ուրբաթ օրը տվել ենք նոր՝ առաջին 38 թույլտվությունը: Վերջին մեկ ամսում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մինչև բոլոր խրամուղիները չեն վերականգնվել, Երևանի քաղաքապետարանի կողմից որևէ թույլտվություն չի տրվել:

Ես բազմիցս ասել եմ և հորդորում եմ վարչական շրջանների ղեկավարներին այս հարցում լինել խստապահանջ, կատարել պայմանագրի բոլոր պահանջները: Նույն խնդիրը դրված է «ՀԷՑ», «Գազպրոմ Արմենիա» և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ների կողմից: Մեր վարքագիծը և խստությունը չի թուլանա:

Ի դեպ նշեմ, որ չեք գտնի մի խրամուղի, 1 քմ վթարի վերացում՝ առանց Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի գիտության: Յուրաքանչյուր ամենաանհետաձգելի վթարի մասին, որը օրենքի ուժով ենթակա է կատարման, բանավոր, արագ, հաղորդակցության միջոցով տեղեկացնում են քաղաքապետարանին: Տեղեկատվությունը հասնում է ինձ և վարչական շրջանի ղեկավարին՝ հետո թույլ է տրվում կատարել քանդման աշխատանքներ: Որևէ հետագիծ չեք գտնի քաղաքապետի շինթույլտվության փաստաթղթերում, որ համաձայնեցված չէ վարչական շրջանի

ղեկավարի հետ: Հետագիծը ոչ ճիշտ, ոչ արդյունավետ լինելու պատճառով բազմաթիվ մերժումներ ենք տալիս: Երբեմն կառուցապատողները փորձում են հարցը լուծել ամենահեշտ ճանապարհով՝ հատել ասֆալտը և մայթը: Մենք դա մերժում ենք, որ համայնքին վնաս չպատճառվի: Պետք է ընտրեն մի քիչ երկար ճանապարհ, որը կլինի անվնաս: Այս հարցը վերահսկողության տակ է, ունեցել ենք լրջագույն քննարկում իրենց հետ: Քննարկումը կարող եմ համարել սպառիչ և այդ պահանջն այլևս ոչ ոք չի կարող խախտել: Հիմա մայրաքաղաքում երկրորդ անգամ ընթանում են ասֆալտապատման աշխատանքներ բոլոր նստվածքների վրա, որ քաղաքում ձմռան շեմին նման նստվածքներ չմնան: Նույն իրավիճակն է նաև մասնավորի հետ: Մասնավորները ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրաէներգիայի նոր միացումներ են ցանկանում: Նույն պայմանը դրված այդ մասնավոր անձանց նկատմամբ: Ինչ մնում է կահավորմանը,՝ լավագույն օրինակը ցուցաբերել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը՝ ժամանակակից կահավորման օրինակով, տեխնիկայով, լուսավորության, անվտանգության բոլոր կետերով:

-Պարոն Զաքարյան այս ուղղությամբ աշխատանք ունենք կատարելու: Մեկ օբեկտիվ փաստի հետ ևս պետք է հաշվի նստենք՝ քաղաքի ստորգետնյա ենթակառուցվածքները, կոմունիկացիաները տեխնիկապես այնպիսի մաշված վիճակում են, որ անխուսափելի են բոլոր այդ քանդումներն ու վթարները: Եթե մեկը մտովի կարող է պատկերացնել, որ քաղաքում այդ խնդիրը պետք է վերանա, կներեք ինքը մեր քաղաքում չի ապրում:

Երկրորդ մասով՝ այո՛, ունենք էլեկտրականությունից, գազից, ջրից օգտվելու հաստատված կանոններ: Այդ կանոնները հաստատել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Դուք լավ գիտեք, որ կնքված է քաղաքացիաիրավական պայմանագիր՝ մատակարարի և սպառողի միջև: Պայմանագրում գրված է կետ, թե ինչ իրավունքներ ունեն սպառողները վատ որակի հոսանքի, ջրի, գազի մատակարարման դեպքերում: Սրանք սպառողի իրավունքներն են, որ դատարան ներկայացնի հայց, պահանջի դատական կարգով իր ունեցած վնասը վերականգնել: Մենք բազմաթիվ քննարկումներ ենք ունեցել ջրի ճնշման տատանումների, անորակ մատակարարման,

«ՀԷՑ» ՓԲ ընկերության ենթակայանների տեխնիկական վիճակի վերաբերյալ, ինչը Դուք օբեկտիվորեն արձանագրեցիք, որ ներկայումս ենթակայաններից դուրս եկող մալուխները վտանգավոր են, ինչի պատասխանատուն «ՀԷՑ» ՓԲ ընկերությունն է: Նույնը վերաբերում է գազի բաշխիչ ցանցին: Այդպիսի քննարկումներ ունեցել ենք և նոր տարվա շեմին մենք պատրաստվում ենք ևս մեկ հանդիպում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ՝ նմանատիպ խնդիրները քննարկելու համար:

Դուք ճիշտ եք, չնայած այդ ամեն ինչը վերագրում են քաղաքապետարանին, բայց իրավական առումով մեր բնակչությունն էլ, Երևան քաղաքի ավագանին էլ պետք է իմանան, որ դրա պատասխանատուն հենց մատակարարն է: Եթե քաղաքում կուտակվում են այդպիսի գլոբալ խնդիրներ, ապա այդ՝ մենք այդ հարցերը բարձրացրել ենք ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև և պատրաստվում ենք կրկին անգամ այդ քննարկումն իրականացնել, քանի որ բնակիչների դժգոհությունը շատ մեծ է՝ որակյալ ծառայության մատակարարման տեսանկյունից: Դրա շահառուն Երևանի քաղաքապետարանն է և մենք այդ քննարկումը կանենք, եթե հարկ լինի Ձեզ կարող եմ հրավիրել այդ քննարկմանը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Արեյան:

Լևոն Ջաքարյան

- Արձագանքեմ: Պարոն Արեյան երևի ես և Դուք տարբեր քաղաքներում ենք ապրում, ամեն դեպքում ես այսպիսի խնդրահարույց հարցերն այսուհետ նաև Ձեզ էլ կուղարկեմ: Հիմնականում կուղարկեմ այն բոլոր տարածքների ցանկերը, որտեղ աշխատանքից հետո լավ չի վերականգնվում տարածքները: Ինչպես օրինակ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցն է: Կարող եք գնալ և տեսնել՝ «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը մալուխներն անցկացրել է, մայթը վերածել է խրամատի և այդպես էլ թողել է:

Մյուս օրինակը կապված է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ, եթե ընկերությունը լավ աշխատեր Երևանի քաղաքապետարանն իրենց փոխարեն մոտ 1000-ից ավել դիտահոր չէր ուղղի և չէր ամրացնի:

Հաջորդ հարցս վերաբերում է աղբահանության կազմակերպմանը: Որակի հետ

կապված բացարձակ դժգոհություն չունեմ: Կարծում եմ, որ Երևանում գոնե վերջին 20-30 տարվա ընթացքում լավագույն կերպով է աղբահանության գործընթացն իրականացվում: Խոսքս վերաբերում է աղբահանության աշխատանքների բաշխմանը, որը կարծես թե այդպես էլ չորոշվեց: Օրինակ՝ այգիներում, պուրակներում ո՞ր կազմակերպությունն է աղբահանությունն իրականացնում, իսկ շենքերի բակերում, մուտքերի առջևի տարածքներում աղբահանության իրականացման գործընթացը կրկին չորոշվեց, համատիրություններ են կատարում, թե՛ Երևանի քաղաքապետարանը: Հաճախ այս խնդրով են բնակիչները դիմում, որ իրենց շենքի բակերը չի մաքրվում: Համատիրությունների նախագահներն ասում են, որ այդ գործառույթը համատիրություններինը չէ, համատիրությունները զբաղվում են շենքի ներքին խնդիրներով, քաղաքապետարանն էլ պնդում է, որ դա համատիրությունների գործառույթն է: Նույն խնդիրն առկա է այգիներում և պուրակներում: «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի ղեկավարությունն տեղեկացրել է, որ նշված տարածքների մաքրման աշխատանքները «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործառույթն է, վերջինս էլ ասում է, որ այդ աշխատանքը չեն հասցնում իրականացնել:

- Խնդրում եմ այս հարցը մեկընդմիջ լուծենք, որպեսզի բոլորիս համար էլ պարզ լինի ովքեր են պատասխանատուները:

Հայկ Մարության

- Խնդրեմ պարոն Արեյան:

Կամո Արեյան

- Նշեմ, որ «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կանոնադրությամբ վերապահված է մայրաքաղաքում աղբահանության իրականացումը: Աղբահանությունն օրենսդրորեն իր մեջ ներառում է և՛ խոշոր եզրաչափի աղբ, և՛ կոշտ կենցաղային թափոններ: Ինչ վերաբերում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին՝ կանոնադրությամբ ամրագրված է, որ ՀՈԱԿ-ը պետք է ապահովվի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մաքրման աշխատանքները, որն իրականացվում է: Աղբի տեղափոխումն իրականացնում է «Երևանի

աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը: Այս հիմնարկների միջև որևէ տարաձայնություն չկա: Գուցե աշխատանքի կազմակերպման թերություններ կան, բայց ասել, որ տվյալ կազմակերպությունները չեն աշխատում իրենց կանոնադրության համաձայն՝ այդպես չէ:

Ինչ վերաբերում է բակային տարածքներին, դրանք ընդհանուր օգտագործման տարածքներ են և «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն իրականացնում է բակային տարածքների մաքրում: Այլ հարց է, որ «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում ձեռքի աշխատուժով աշխատող հավաքարարների քանակը բավարար չէ և այս տեսանկյունից դժվարությամբ ենք կարողանում սպասարկել բակերը:

Համատիրությունների մասով կարող եմ ասել, որ դա մեր ամենախոցելի օղակն է և այսօր համատիրությունները լիարժեք չեն կատարում իրենց պարտականությունները: Այն, որ համատիրությունները պարտականություններ ունեն շենքի նկատմամբ՝ օրենսդրորեն ամրագրված է: Թե ինչու՞ չեն կատարում իրենց պարտականությունները կամ ինչու են վատ են աշխատում, շատ չեմ ուզում ասել, որ դա օրենսդրության պատճառով է, բայց այստեղ ունենք օրենսդրական խնդիր: Հիմա աշխատանքը թերանում է, որովհետև նոր անցում է կատարվում շենքերի առանձին հաշիվների բացման աշխատանքներին: Յուրաքանչյուրը պատասխանատվություն կկրի իր հաշիվն փոխանցված սպասարկման վճարների դիմաց կատարած աշխատանքների համար և կարծում են նոր տարվանից հետո այս աշխատանքները բավականաչափ կկարգավորվեն:

- Այո՛, պարոն Զաքարյան. մենք ունենք խնդիր ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման հետ, բայց կրկնում եմ իրավաբանորեն ամբողջը վերապահված է «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին: Կանոնադրորեն «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին տրվել է նաև պուրակների, այգիների ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման աշխատանքները, աղբի տեղափոխումը տրված է «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին:

Հայկ Մարության

- Շնորհակալություն, պարոն Արեյան:

- Պարոն Զաքարյան, պարոն Արեյանն ավելի ընդհանրական և ըստ կանոնադրությամբ ներկայացրեց, բայց կան դեպքեր, երբ երկու հիմնարկի տնօրեններն պայմանավորվում են մեծ պուրակների և տարածքների մաքրման աշխատանքների մասին: Ընդհանուր առմամբ ասեմ, ուղղակի մեջբերելով միջազգային փորձը, քաղաքային իշխանությունները պարտավորվածություն ունեն մաքրել ընդհանուր տարածքները՝ սավերաբերում է և՛ ձնամաքրման, և՛ սանիտարական մաքրման աշխատանքներին:

Նշեմ, որ մեծ և հարուստ քաղաքներում, այդ աշխատանքները միայն քաղաքային իշխանությունը չի իրականացնում: Այդ քաղաքներում հստակ կանոններով սահմանել են՝ քանի որ բակերը պատկանում են բնակիչներին և օգտագործվում են նրանց կողմից, բակային հատվածների մաքրման աշխատանքների համար պատասխանատու են համատիրությունները: Քաղաքային իշխանությունն զբաղվում է փողոցների, մայթերի, պուրակների, այգիների մաքրման աշխատանքներով: Այս ամենն իրականացվել է նրա համար, քանի որ չկան այդքան մարդկային և գումարային ռեսուրսներ: Ինչպես տեղական ինքնակառավարման մարմինները պետությունից առանձնացվել են, քանի որ ավելի լավ են տիրապետում ոլորտին, այնպես էլ համայնքն այդ պարտականությունը տվել է համատիրությանը, քանի որ համատիրությունն ավելի լավ կարող է մաքրել բակերը: Լինում են տարբերակներ, օրինակ, համատիրությունները չեն իրականացնում իրենց աշխատանքները կամ ժողովուրդը չի հավաքագրում գումարները, բայց սա ընդամենը գումարների բաշխման մասին ենք խոսում: Այս դեպքում կամ բնակիչները համատիրությունների միջոցով պետք է գումար հավաքագրեն, կամ քաղաքային իշխանությունը պետք է բնակիչներից գումար գանձի բակերը մաքրելու համար: Այսինքն, այստեղ կոնկրետ կարգավորման խնդիր կա: Զարգացած երկրներում ընտրել են առաջին տարբերակը՝ քաղաքային իշխանությունը մաքրում է փողոցները, պուրակները, համատիրություններն էլ՝ բակերը: Նշեմ նաև, որ սեփական սեկտորի պարտականությունների մեջ է մտնում նաև ձնամաքրման և սանիտարական մաքրման աշխատանքները: Այս մասով ես հանձնարարական եմ տվել և ուզում եմ հասկանանք, որ

Ֆինանսական և կազմակերպչական մոդելով կարող ենք առաջնորդվել: Այստեղ պետք է որոշենք, եթե համատիրությունն իրականացնելու է այդ աշխատանքները, ապա պետք է որոշենք մեխանիզմները, ինչպես ենք իրենցից այդ աշխատանքի արդյունքը ստանում: Երկրորդ՝ եթե քաղաքային իշխանությունն է իրականացնում այդ աշխատանքները, ապա ի՞նչ միջոցներով է իրականացնում աշխատանքները և որտեղի՞ց են այդ միջոցները գեներացնելու:

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն, Սիփան Ասատրյան:

Սիփան Ասատրյան

- Ես կցանկանայի տեղեկություն ստանալ այս տարի Երևան քաղաքում ֆիզիկական մատչելիության ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին, մասնավորապես՝ թեքահարթակների, դեղին գոգավոր սալիկների կառուցման և ձայնային լուսացույցերի տեղադրման վերաբերյալ: Խնդրում եմ տեղեկացնել նաև խափանված ձայնային համակարգերի, վնասված թեքահարթակների վերականգնման մասին: Օրինակ՝ Նոր Նորք վարչական շրջանի Բակունցի փողոցում վերջերս տեղադրվել է ձայնային լուսացույց և տեղադրման աշխատանքների արդյունքում քանդվել է բավականին լավ վիճակում գտնվող թեքահարթակը:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

- Քանի որ այդ ծրագրերն իրականացնում են վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը, ուստի՝ այս պահի դրությամբ տեղեկատվության չեմ տիրապետում:

Հայկ Մարության

- Հարցի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

- Պարոն քաղաքապետ, տվյալները կարող ենք ամփոփել և գրավոր ներկայացնել:

Հրայր Սարգսյան

- Ինչ վերաբերում է հետիոտնային կանչով լուսացույցերի տեղադրմանը, տեղեկացնեմ, որ այս տարի նախատեսվել էր տեղադրել 69 լուսացույց, 49 լուսացույց տեղադրելու համար մրցույթը շահել է մի կազմակերպություն, որն իր պարտավորությունները չի իրականացրել: Հիմա կրկին հայտարարել ենք մրցույթ, ամսի 29-ին մրցույթի փաթեթի բացումը կլինի, նախատեսվում է այդ աշխատանքներն իրականացնել մինչև տարեվերջ: Այդ 69 լուսացույցը նախատեսված է ձայնային ազդանշանի ռեժիմով աշխատելու համար, 14 լուսացույց արդեն տեղադրված է և շահագործվում է: Այս պահի դրությամբ այդ 14 լուսացույցի ազդանշանային համակարգի խափանման վերաբերյալ տեղեկություն չունեմ:

Սիփան Ասատրյան

- Երկրորդ հարցը վերաբերում է տրանսպորտային ցանցի բարեփոխումների շրջանակում քարտային համակարգի ներդրմանը: Ուզում եմ իմանալ որոշակի սոցիալական խմբերին զեղչային արտոնություններ տրամադրելու համար կլինի արդյոք հայեցակարգ: Այդպիսի հայեցակարգ, եթե ունենք, խնդրում եմ պատասխանել, ո՞ր սոցիալական խմբերին է վերաբերում և ինչպե՞ս է այդ գործընթացն իրականացվելու:

Հայկ Մարության

- Այս պահին Երևան քաղաքում գործում է որոշակի կանոններ, որոնք պահպանվելու են և այդ կանոններն ավելացնելու հարցը ներկայումս չի քննարկվում, անհրաժեշտության դեպքում կարող ենք քննարկել:

- Հաջորդ հարցի համար Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյան:

Իզաբելլա Աբգարյան

- Հաշվի առնելով Covid-19 համավարակը և դիմակ կրելու արդյունքում քաղաքացիների թթվածին ստանալու սուր պահանջը, քաղաքացիները փորձում են այն ստանալ զբոսայգիներում: Ցավոք, պետք է արձանագրեմ շատ տխուր պատկեր.

-Կխոսեմ Կենտրոն վարչական շրջանի զբոսայգիների մասին, սակայն այս ամենը վերաբերում է նաև մյուս վարչական շրջանների զբոսայգիներին: Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Պողոսյանին հաճախ ուղարկում եմ զբոսայգիների լուսանկարներ, որտեղ երևում են, որ սեփականաշնորհված հատվածներում առկա է փնթի իրավիճակ: Օրինակ, Օղակաձև զբոսայգում՝ Այվազովսկու արձանի հարակից հատվածը նման է խորդանոցի: Պետք է արձանագրեմ, որ խնամված զբոսայգիներում գործող սրճարանների առջևի հատվածը մաքուր է, իսկ սրճարանի հետնամուտքի հատվածում՝ չխնամված վիճակ է:

Ցանկանում եմ դիմել տնտեսվարողներին.

- Չի կարելի երևան քաղաքին և երևանցիներին այդպես վերաբերվել, նման իրավիճակ չենք կարող տեսնել օրինակ Փարիզի և Վիեննայի զբոսայգիներում:

- Պարոն քաղաքապետ, ունե՞նք լծակ, որ արգելենք այդ իրավիճակը:

Անդրադառնամ Անգլիական զբոսայգուն, որի տարածքում առկա է աղբ և անպիտանի իրեր: Զբոսայգիները լոկ գեղեցկության համար չեն, այլև առողջության և հանգստի համար են նախատեսված: Նշեմ նաև, որ զբոսայգիներում տեղադրված նստարանները և աղբամանները հարմարավետ չեն քաղաքացիների համար:

Խնդրում եմ տեղեկացնել Օղակաձև զբոսայգում տեղակայված Բարերարների ճեմուղում հայ բարերարների արձանների գողացված բրոնզե հատվածները վերականգնվելու են թե՞ ոչ:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

- Տիկին Աբգարյան, ամբողջովին կիսում եմ Ձեր մոտեցումը: Համայնքի միջոցներով բարեկարգված զբոսայգիներում գրանցվում է լավ արդյունք: Տնտեսվարողների հետ համատեղ աշխատանքում հիմնականում առնչվում ենք խնդիրների հետ, չնայած կան նաև սոցիալական պատասխանատվություն դրսևորող տնտեսվարողներ: Տիպիկ օրինակ է՝ Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածը, որը շուտով կհանձնվի շահագործման: Արդեն

գործում է Սարյանի զբոսայգին հրաշալի ենթակառուցվածքներով, որը ընտրվել էր քաղաքացիների քվեարկությամբ:

Ինչ վերաբերում է գողություններին, նշեմ, որ տեղեկություն չունեմ, վաղը ոստիկանությունից ճշտում կկատարեմ, եթե նախաքննական գաղտնիք չլինի, Ձեզ կտեղեկացնեմ: Ձեր կողմից նշված հատվածում բավականին աշխատանքներ ենք իրականացրել Կամերային թատրոնի հետ համատեղ: Արդյունքում ստացել ենք կանաչապատ տարածք: Զբոսայգու մի հատվածի մասով ընթանում է դատական գործընթաց, ուզում ենք տարածքը հետ վերադարձնել համայնքին, որից հետո տարածքը կբարեկարգվի և կհանձնվի քաղաքացիներին:

Հայկ Մարության

- Շնորհակալություն, ուզում եմ հավելեմ, որ վարչական շրջանների ղեկավարներին բազմիցս ասել եմ, որ ընդհանուր առմամբ գոհ չեմ տնտեսվարողների սոցիալական պատասխանատվությունից: Մասնավորապես, Կենտրոն և Արաբկիր վարչական շրջաններում տնտեսվարողները շատ են, սակայն միևնույն է պետք է բոլոր վարչական շրջաններում տնտեսվարողներն իրենց աշխատանքներում դրսևորեն բարձր պատասխանատվություն: Այս առումով վարչական շրջանների ղեկավարների հետ համատեղ կան իրականացվելիք բազմաթիվ աշխատանքներ:

Տիկին Աբգարյան, այլ քաղաքների հետ համեմատական անցկացնելու վերաբերյալ, պետք է նշեմ, որ նշված քաղաքների բյուջեի հնարավորություններն այլ են:

Իզաբելլա Աբգարյան

- Պարոն քաղաքապետ, որպես արձագանք նշեմ, որ հարցս վերաբերում է զբոսայգիներում կոկիկ և մաքուր պայմաններ ապահովելուն և գումար չի պահանջվում:

Հայկ Մարության

- Կրկնում եմ Երևան քաղաքի բյուջեի հնարավորության սահմաններում երեք տարվա ընթացքում կատարել ենք աշխատանքներ, որոնց գնահատականը պետք է քաղաքացիները տան:

- Հաջորդ հարցի համար՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Էռնեստ Ավանեսով:

Էռնեստ Ավանեսով

- Հարցս վերաբերում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ծառայողական ավտոմեքենաներին: Ներկայումս գործող մոդելը, որը կարծես, Սովետական միության ժամանակաշրջանի մոդելի ժառանգորդն է՝ յուրաքանչյուր պաշտոնյա պետք է ունենա ծառայողական ավտոմեքենա: Չեք դիտարկում արդյոք, որ պետք է ծառայողական ավտոմեքենաները ընդհանուր բալանսի բերվեն և աշխատանքային օրվա ընթացքում, ըստ անհրաժեշտության, օգտագործվեն:

Հայկ Մարության

- Ես հանձնարարել եմ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարին, որ ծառայողական ավտոմեքենաներից օգտվեն այդ ձևաչափով՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով:

Հարցին առավել մանրամասն կանդրադառնա Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Դավիթ Համբարյանը:

Դավիթ Համբարյան

- Իրականում այս պահի դրությամբ ծառայողական ավտոմեքենաները, դե յուրե, ամրագրված են աշխատակազմի որևէ ստորաբաժանմանը, բայց ընդհանուր աշխատանքի համար Ձեր կողմից նշված մոտեցումը կիրառվում է:

Հավելեմ, որ ծառայողական ավտոմեքենաների հիմնական շարժակազմը գտնվում է բավականին հնացած վիճակում և ծառայողական ավտոմեքենաների շարժակազմը թարմացնել հնարավոր է առնվազն հաջորդ տարվա ընթացքում: Ձեր կողմից նշված մոդելը, եթե ոչ ամբողջությամբ, բայց անպայման կկիրառվի:

Էռնեստ Ավանեսով

- Պարոն քաղաքապետ, տեղյակ եմ, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն գրություն է ուղարկել Երևանի քաղաքապետարան՝ մոնիթորինգի ենթարկելու համար Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների և այլ ՀՈԱԿ-ների շենքերի վիճակը՝ պայմանավորված ապաստարանների առկայության կամ դրանց պոտենցիալ տեղերի բացահայտման հետ: Վերջերս հրավիրված էի հաղորդման, որտեղ

Քաղաքաշինության պետական կոմիտեի պաշտոնյան այդ մասին տեղեկացրեց: Մեկ տարվա ընթացքում, հատկապես պատերազմից հետո, արդյոք ունենք ապաստարանների հետ կապված դրական առումով փոփոխություններ:

Խնդրում եմ ասել, այդ ուսումնասիրությունների արդյունքներն այսօր կարող ենք հրապարակել կամ աշխատանքներն ի՞նչ փուլում են գտնվում:

Հայկ Մարության

- Հարցին կատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

- Ինչպես գիտեք Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում ստեղծվել է զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչությունը, որի կազմում գործում է քաղաքացիական պաշտպանության բաժինը: Այդ բաժինն, ըստ կանոնադրության վերապահվել է Երևան համայնքում քաղաքացիական պաշտպանության աշխատանքների համակարգումը: Տվյալ բաժնի կողմից իրականացվում է թաքստոցների և ապաստարանների մոնիթորինգի աշխատանքները: Այս պահի դրությամբ մեկ վարչական շրջանում իրականացրել ենք վարժություն՝ հասկանալու համար բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներն ի՞նչ վիճակում են գտնվում: Այդ վարչական շրջանում ՀՀ ԱԽՆ գործընկերների հետ համատեղ յուրաքանչյուր շենք նկարահանվել է, դիտարկվել են նաև մանկապարտեզների և դպրոցների շենքերը: Մանկապարտեզներում և դպրոցներում խնդիր ունենք՝ 1970-80-ական թվականներից մնացած գույքը դուրս չէր գրվել և կուտակված էր նկուղներում: Հանձնարարական է տրվել մանկապարտեզների և դպրոցների շենքերի նկուղներում կուտակված ոչ պիտանի գույքը դուրս գրել և նկուղները պատշաճ տեսքի բերել: Բազմաբնակարան բնակելի շենքերում ցավալի իրավիճակ է՝ տվյալ վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներում քաղաքացիները շինադր են լցրել: Այս պահի դրությամբ համագործակցում ենք միջազգային գործընկերների հետ, միջոցներ ենք ձեռնարկում մաքրման աշխատանքներում ընդգրկել քաղաքացիներին: Երևանի քաղաքապետարանը ևս պատրաստակամ է աջակցել այդ աշխատանքներին: Կարծում եմ

այս մոդելը տվյալ վարչական շրջանում օգտագործելուց հետո, կկիրառենք նաև մյուս վարչական շրջաններում:

Էռնեստ Ավանեսով

-Խնդրում եմ մի փոքր արագացնենք այդ գործընթացը: ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն նշում է, որ պետական բյուջեից փաստացի հատկացված գումար կա: Բնականաբար, համայնքը պետք է մոնիթորինգ կատարի, որպեսզի հասկանալի լինի աշխատանքների ծավալը:

Հրաչյա Սարգսյան

- Պետք է տարանջատել թաքստոց և ապաստարան հասկացությունները: Թաքստոցը վայր է, որտեղ քաղաքացիները կարճաժամկետ պետք է պատսպարվեն, իսկ ապաստարանները նախատեսված են ավելի երկարաժամկետ պատսպարվելու համար: Ուստի՝ կոմունիկացիաները պետք է տարբեր լինեն: Ես ինչի մասին խոսեցի վերաբերում էր թաքստոցներին: Ապաստարանների վերաբերյալ կան տարբեր հարցեր, որոնք կարծում եմ, պետք է քննարկել աշխատանքները կոորդինացնող լիազոր մարմնի հետ: Երևանի քաղաքապետարանն իր ռեսուրսների շրջանակում այս պահի դրությամբ կարող է իրականացնել այն աշխատանքներն, որն իմ կողմից ներկայացվեց: Այդ աշխատանքներն իրականացնելու համար 2022 թվականին Երևանի քաղաքապետարանին տրամադրվող բյուջեում որևէ տող չունենք: Նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են համայնքային միջոցների հաշվին:

Հայկ Մարության

- Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնեն նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը և Երևանի քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանը:

Անդրանիկ Սեդոյան

- Պարոն քաղաքապետ, որպես տեղեկատվություն, հայտնում եմ, որ այս պահին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից շրջանառվում է պաշտպանական կառույցների շինարարական նորմերը, կատարվում են փոփոխություններ և թարմացումներ, դրանք

տրամադրվել են նաև Երևանի քաղաքապետարանին՝ կարծիք տրամադրելու համար: Դեռևս ուսումնասիրությունները չեն ավարտվել և աշխատանքներն ընթացքում են:

Դավիթ Ճգնավորյան

- Խնդիր ունենք երկու հարթությունում.

Դրանք այն շենքերն են, որոնք կային և ունեն այդ ծավալները և այն շենքերը, որոնք նոր են նախագծվում և կառուցվում: ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ պարոն Ղուլարյանի հետ դեռևս մեկ տարի առաջ քննարկումներ ենք սկսել: Իմ կողմից հորդորում եմ գործընկերներիս՝ խնդիրը չլուծել ըստ հրատապության, այլ արձանագրենք, որ դա օրհասական հարց է: Այս հարցը պետք է լուծել խաղաղ պայմաններում: Ապաստարանների ձևավորման քննարկումների ընթացքում կառուցապատողներին պահանջ ենք ներկայացրել, որ նորմ հանդիսացող կայանատեղիները ծառայեն որպես ապաստարաններ, որոնք պետք է կահավորվել համապատասխան ենթակառուցվածքներով: Այս հարցն արագ լուծելու դեպքում, կարող ենք օրենքով պահանջել այս նորմերը և քաղաքում կունենանք նոր կոնցեպտով կառուցված շենքեր:

Հայկ Մարության

- Մեկ անգամ ևս հիշեցնում եմ, որ Երևան քաղաքում 60-ից ավելի գործող շշակ կար, բայց պահանջվում էր 180-ից ավել: Ներկայումս դա լրացվել է և Երևան քաղաքում ունենք պահանջված քանակի շշակներ:

Ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, ավարտվեց հարց ու պատասխանը, Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեցին՝
Լ. Ալոյանը,
Ն. Ղուկասյանը,
Ք. Սարգսյանը